

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 9-ը Եվրոպական Եկեղեցիների Համաժողովի (ԵԵՀ) ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերը գտնվում էր Սովետական Միությունում՝ այցելելու համար Համաժողովի անդամ ութ Եկեղեցիներին: Նա եղավ Մոսկվայում, Լենինգրադում, Հայաստանում, Վրաստանում և Մերձբալթյան երեք հանրապետություններում:

Վերջին տարիներին Եվրոպական Եկեղեցիների Համաժողովը մեծ աշխատանք է ծավալում միջեկեղեցական, էկումենիկ կյանքի աշխուժացման համար: Օժանդակում է քույր Եկեղեցիների փոխհարաբերությունների ամրացմանը: Այս իմաստով ահա կարևոր են նման այցելությունները՝ տեղում ծանոթանալու համար անդամ Եկեղեցիների եկեղեցական կյանքին:

Տիար Ժան Ֆիշերը դեկտեմբերի 1-ին եղավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ծանոթացավ Մայր տաճարի և Գանձատան մշակութային արժեքներին, հետաքրքրվեց հոգևոր ճեմարանի ուսումնական խնդիրներով, ԵԵՀ-ի անունից պատրաստակամություն հայտնեց օժանդակել հոգևոր ճեմարանին՝ ուսման ընթացքը ավելի նպատակասլաց և արդյունավետ դարձնելու համար:

Ժան Ֆիշերը դեկտեմբերի 3-ին եղավ նաև Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում, որտեղ հանդիպում ունեցավ առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի հետ: Բարեկամական մթնոլորտում զրույց ծավալվեց քույր Եկեղեցիների փոխօգնության, եկեղեցական կյանքի մասին տեղեկությունների աշխույժ փոխանակման անհրաժեշտության մասին: Ընդգծվեց մանավանդ Եկեղեցիների դերը ժողովուրդների միջև բարեկամության և համաշխարհային խաղաղության համար մղված պայքարում:

Տիար Ֆիշերը Մայր Աթոռ հանձնեց ԵԵՀ-ի ուղերձը Գերագույնի՝ գլխավոր քարտուղար Գորբաչովի և պրեզիդենտ Ռեյգանի հանդիպման առիթով:

«Մենք ապրում ենք նախածննդյան հիսնյակի օրերը՝ խաղաղության հույսով և Տիրոջ թագավորության սպասումով: Այդ թա-

գավորության մեջ չի լինի ո՛չ պատերազմ, ո՛չ ատելություն, ո՛չ սրտնեղություն, այլ միայն խաղաղություն, սեր և արդարություն:

Մենք վկաներն ենք խաղաղության և ժողովուրդների միջև փոխըմբռնման մի մեծ հույսի ծնունդի: Միջին հեռահարության հրթիռների վերացման մասին համաձայնությունը մի առաջին քայլ է՝ վերացնելու համար զարհուրելի զինանոցները, որոնք սպառնում են մեր աշխարհին: Մենք հուսով ենք, որ զինաթափման այս դինամիկ շարժումը կաճի, և այդպիսով խնայվող միջոցները կդրվեն բոլոր ժողովուրդների կյանքի և զարգացման ծառայության մեջ:

Կարծում ենք, որ այս համաձայնությունը գործնական մի նշան է այն վստահության, որ կարող է և պետք է հաստատվի ժողովուրդների միջև:

Մենք աղոթում ենք դեկտեմբերի 7-ի հանդիպման համար և խնդրում Եվրոպայի Եկեղեցիներից ու քրիստոնյաներից՝ մըշտապես աղոթելու խաղաղության, արդարության և այն բանի համար, որ Աստուծո գեղեցիկ ստեղծագործությունը պահպանվի»:

Լենինգրադ և Ժնև,
1 դեկտեմբերի 1987 թ.

Տիար Ֆիշերը Հայաստանից մեկնեց՝ Հայ Եկեղեցու մասին խորացած ծանոթությամբ և այն հաստատ համոզումով, որ Քրիստոսի հնագույն Եկեղեցիներից մեկը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ինչպես իր ողջ պատմության ընթացքում, այնպես էլ հիմա հավատարիմ է քրիստոնեական պատգամին՝ «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Հայաստանից վերադարձին Ժան Ֆիշերը Վեհափառ Հայրապետին հղեց հետևյալ շնորհակալական նամակը.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Սովետական Միությունից Ժնև իմ վերադարձից անմիջապես հետո ծանրաբեռնվեցի գրասենյակային նյութերով, որոնք պահանջում էին շուտափույթ ուշադրություն, զբաղվեցի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Դեմետրիոս Ա-ի Ժնև այցելությամբ, ինչպես նաև ԵՔԽ-ի ֆինանսական կոմիտեի նիստերով: Այս բոլորը պատճառ եղան, որ միայն այսօր կարողացա գրել Ձեզ այս նամակը:

Ուզում եմ արտահայտել իմ խորին շնորհակալությունները Ձեզ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր մարմիններին՝ իմ այցելության հետ կապված բոլոր կարգադրությունների համար: Շատ լավ փորձառություն էր իմ աշխատանքի համար, արդյունավետ և օգտակար: Խորապես գնահատում եմ նաև այն ժամանակը, որ Դուք անձնապես, Ձերդ Սրբություն, տրամադրեցիք ինձ:

Իմ այցելության ծրագիրը կազմված էր այնպես, որ ես, թեկուզ սահմանափակ ժամանակում, հնարավորություն ունենայի տեսնելու Սովետական Միությունում ԵՔԽ-ի անդամ Եկեղեցիների կյանքը իրենց իսկ միջավայրում: Այսպիսի շփումները համարում եմ ավելի քան արժեքավոր: Խորապես շնորհակալ եմ ազնվության համար այն մարդկանց, որոնք օգնեցին ինձ, և կուզենայի, որ իմ սրտագին շնորհակալությունները հասնեին բոլորին Ձեր միջոցով:

Լավագույն մաղթանքներով ի Հիսուս Քրիստոս,

Սիրով Ձեր՝

ԺԱՆ ՖԻՇԵՐ

Ժնև,
17 դեկտեմբերի 1987 թ.